է, դարձեալ գոյ է անիկայ որ ծա-
ռայողին աշխատութեան համեմատ
վարձք չտար։

Լ.

Ընտանեան արիներ։ — Ընկերութեան
մէջ դեռ ուրիշ պարտականութիւններ ալ
հարկաւոր են, ինչպէս՝ բժիշկը զմեզ
առողջացնելու համար. փաստաբանը
մեր իրաւունքները պաշտպանելու հա-
մար. վարժապետը դպրոցարակելու
համար. քահանայն հաւատոյ կարեւոր
բաները սովորեցնելու համար. դատա-
ւորը մեկուն իրաւունք ունենալը չա-
նենալը որոշելու համար. զինուորը մեր
ազատութեան վրայ հսկելու հա-
մար. և այլպէս դեռ ուրիշ շատ ըզ-
բաղմանութիւններ (1). սոնք թողլն ալ ու-
րիշներուն օգտին համար չէ՞ն մի աշ-
խատիր. ուրեմն իրաւացի է՛ որ վարձք
մը՝ ունենան։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս Նոմարդ թուով ծանուցած
եմք Պրուսիոյ Վ. Եհ. Թագաւորին մին-
քանական ուխտիս բրած վերհանձնա-
կան շնորհը, այս անգամ պատիւ կը
համարիմք հրատարակել Նոյին Ազգա-
յական յիշատակաց մասին Ս. Հռաս-
քիս Վ. սեմ. Հիւպատոս Այնդ. Պրոֆէ-
սէր Պ. Պէտերման հայագիտի առ
Ամեն. Արքայական Հայրն ուղղած
նամակը, նուիրելով մեր երախտագի-
տական զգացմունքը առ Նորին Մե-
ծութիւն Վ. սեմ. Տօքթոր Պէտերման
հայասէր անձն, որ իւր ազնիւ սրտին
արդիւնքը՝ ի գործ դրած է, այն է
Արքայան Հօր ազգ ինքն յայտնած սէ-
րը ու համակրութիւնը ծանուցած է
Վ. Եհ. Ազգային Պրուսիոյ՝ որս Հնար-
հիւ կը պանծայ ու խաս պարտ Թագաւ-
որական յիշատակաց։

Ցերուսաղէմ. 8 Օգոստոս քառ նոր տոմարի. 1868.

Հիւպատասարան Հիւսիսային
Գերմանիոյ գաղութակցութեան
Ի Յերուսաղէմ։

ԱՄԵՆԱԳՈՅԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՏԷՐ

«Պատիւ ունիմ ծանուցանել Հնար
բարձր Արքայութեան՝ թէ ընկերոյ
Ի վեհապատիւ Նախարարաց Տերու-
թեան մերոյ զարտակերս Օգոստոսիոյ
թագաւորին և թագուհւոյն, պարշա-
նական գրութեամբ հանդերձ, յորում
յատկապէս պատուիրի ինձ՝ զի մա-
սուցից զայնս Ի կողմանէ Նորին Ար-
քայական Մեծութեանն՝ թագաւորին
Պրուսիոյ և Նախարարին Հիւսիսա-
յին Գերմանական գաղութակցութեան
Դուքեմանսի Ա. առ ձեր Վեհապա-
պատիւ Արքայնոյ թիւն Ի նշան շնո-
հակալութեան վասն սիրոյդ բարեշ-
նորհութեան, զոր ցուցիք և ցուցա-
նէք ինձ հանապազ, և մանաւանդ վա-
սեմամիտոյ Բարոնի Արքայ Յոյնն-
նու Baron de Tetten (Բարոն դէ Տէդդ՝) որ ինք-
նին հաստատեալ է յանկն Նորին Ար-
քայական մեծութեան զամենայն բա-
ղեհամբարութիւն ձեր զոր յանդ-
գնելս գարեան վերջերեայ ատա, առ
ձեզ Յերուսաղէմ։ Վեհապատ ամենածա-

(1) Ազնուական տոհմաց կամ պարտականութիւնք ըստ ան-
ուանելոյն ամենք Ֆոռղլին ինչպէս Կրիմ թիւն, իրաւաբ
գիտութիւն, Աստուածաբանութիւն և հաշուագրութիւն
անենք ալ Ֆօգին, ինչպէս Բժշկութիւն, Վիրաբա-
ժութիւն. Դեղագործութիւն։ Ցիմենք ալ Ի անդին
ինչպէս Ատրաբութիւն և Զինուորութիւն։ Լոկ
սանց ամենուն գերագոյն գլուխն է Կրօնքը իւր
պաշտօնն անելովը, կրսե հեղինակը։ Բայց պարսն Տ.
Հ. Թ. Ս. ալ կարդալ թէ վարժապետներն են։
Տես ծանրկ հանդիսին 108 երեսը և ես ալ ի՛ ընտ
թէ իրաւունք ունի՝ գերագոյնը վարժապետներն են
Ծ. Օրինակ։

(Պիտի շարունակուի։)

կան յարգանաք կամ և մեամ բարձր Սրբազնութեան ձերում։

Անձնանուէր H. Petermann
(Հ. Պետերման) առ ժամանակաց Հիւպատոս Հիւսիսային Գերմանիոյ Դաշնակցութեան Ս. Գրքում։

Ամենապատիւ Տ. Տ. ԵՍԱՅԻ Պարիզոյ ամենայն Հայոց Ի Սուրբ Եջմիածին։

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Գանի քսանչորս մեզ Ս. Տանս բարեբարաց անուանքը Հանդիսիս միջոցս հրատարակելու բարեբախտութիւնը ունենալ, և քսանչորսդ այն արդեօք կը համարի սիրելի ազգայնոց և ընել իրենց ազգութեան պարծանք եղող Ս. Տանը օր ըստ օրէ փառաւորուիլը թէ նուազապէս, և թէ բարձրացագէս։ Անուրանալի է Յմեն. Սրբոյ Հոգան Հոր եռանդուն ջանքը ի մասին բարոյապէս փառաւորութեան արդեամբք նորոգ հաստատում թեանց, որոց ակամատեաք առանց ակնառութեան կը վկայեն։

Այս արդարեւ առանց խորին շնորհակալութեան պարտք համարելու չեմք կարող անցնիլ չյիշելով այն բարեբարաց անուններն, որոնք տեսնելով բարեհնամ Հոր փափագն ու եռանդը իրենք եւս ազգասիրաբար կը խրախուսեն Նորին Սրբազնութեան ձեռնարկութիւնքը առատաձեռնութեամբ աջակցելով։

Մեծահամբաւ և ազգասէր Պէհզատ Ամէտ Էֆէնտին, որ իւր զարմանալի վրձինովը, և խոհեմ քնաւորութեամբը՝ ազգասէր եռանդովը եւ առատաձեռնութեամբը Աստուծոյ ընդհանրութեան ծանօթ է. Ամէտ Էֆէնտին կրսեմք իւր բարեսրտութեամբը Ս. Էջմածնայ Թանգարանին տալի պարծանութեանը, և Սրբազան Հոր անձանձիր ջանից իրախուսող և զրաց ցուցանողներէն մինն ըլլալու պատեհին ընտանալը ուրախութեամբ կը ծանուցանեմք։

Այնպէս թուաւ ծանուցինք Պարսից Պ. Հ. Թագաւորին և Թագուհւոյն կենդանագրաց հանելը։ Միաբանութեանս սիրելի և մխիթարիչ չէր ըլլար եթէ իւր Աստուածափառ տիրոջը կենդանագիրն եւս ունենալ իրեն խառնարհ յարկին փառք և պարծանք։ Աստուածափառ տիրոջը, Աստուն բարձր հովանաւոր տակ կը պատապարուի։ Աստուն առատագութ իմանքը կը վայելէ միշտ։ Աստուն վեհանձնական առանձնաշնորհութիւններն ունի։

Այսն հազուագիւտ շնորհին արժանանալու պատճառն եղաւ Պ. Հ. զատ Ամէտ Էֆէնտին, իւր քաջ գրչին արդիւնքը կենդանագիր պատկերը Աստուածափառ Կայսեր Սուլթան Աբդուլ Էզիզ Խանի յանձնելով Թանգարանիս նուէր յաւիտենական, ի յիշատակ վաղամեռիկ որդւոյ իւրոյ սիրելոյ Աբրահամ Աստուածատուրի։ Միաբանութիւնս երախտագիտութեամբ կանգնէ զայս մահարձան դատեր Նորելու հոգ ի մխիթարութիւն որդեկորոյս ծնողաց։



Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀ ՀՈԳՒՈՅ ՄԱՐԻԱՄՈՒ ՋԱՐՈՒՀԻՈՅ

ԱՐՁԱՆ ՅԱՒԵՐԺ

Որ հանգուցեալ 'ի կենաց և ընդ հոլովս արդ 'ի նիրհ
Տարփիլդ նազելի, ընդ 'ի խորոց գերեզմանիդ.
— Մինչ 'ի կենացդ անմխիթար՝ զգործակցութ քոյդ լքեր հայր
Դուան արտասուաց քամեալ յաչաց յորդ յորդ վտակս կրկնուածս.
Հայ յայնմհետէ երկինք 'ի գութ 'ի նա դիտակն անկարկեալ
Մատուցանել կամեցաւ հաճ ցաւոցն դեղ մխիթար։
Ուստի և զարթուցանէր ընդ արեգին 'ի միտս խոհ,
Կանգնել արձան յաւերժական մանկամարդիդ սուղ կենաց.
Որ միակ լինի արդեօք իւր մխիթար և սփոփումն
Ի քնուր ցաւոցն, յետ մահուդ անմահ դրոշմ թողեալ զանուն.
Քան զոր չունի վայելել փառս երկիր համբաւն յետ մահու։
Ուստի զուարթ առեալ զկրձին ըզմեծ գործին արուեստին,
Նկարէ ուրախ ուրախ զկենդանագիր Մուրդանին
Տաճկաստանեայս Օչասափա Եղաւուլ Եղիղ քարձր խանի,
(Դրոշմելով 'ի ստորեւ զանուն իւր յանձինդ գոլ նազելի.)
Կանգնել յարձան 'ի սուրբ Յակոբ Երուսաղէմ Քաղաքի։
Զոր առաջի իւր ունելով ուխտս Յակոբայ միշտ յաւէտ.
Մաղթէ յերկնից 'ի բուրմունս մշտամուտ իւր աղօթից
Դիւր սփոփումն վշտաց ցաւոց ծնելոյ Հօրդ Ոսկանի,
Հանգուցելոյդ շնորհելով զերկնից հանդիսաւն անճառելի։

— Լրագիրք ժամանակին ծանուցին Աստուծոյ Վեհ. Կայսեր զուտակ մի ծը նիլը։ Կայսերածին մանկան միրուութեան համար Աստուծոյ Վեհ. Հիւպատոսը Յորդանան գետէն ջուր խրկելու դիտաւորութիւնը Սմ. Սրբազն Հօր յայտնելուն՝ նորին Սրբազնութիւնը սիրով հաճեցաւ որ Աթոռոյս կողմանէ յանձնարակեայ հնագիւտ վարդեջրի կժիկ մի նուիրել։

Շնորհակալութեամբ ընդունելով Վեհ. Հիւպատոսը և Յորդանանու ջուրը նոյն սափորով խրկելով, յատուկ գրութեամբ Վեհ. Կայսեր յայտնած էր Սրբազան Հօր նուէրը։ Նորին կայսերական Վեհութիւնը ի նշան գոհունակութեան՝ իւր և Օգոստաշուք Թագուհւոյն կենդանագիր ներկեալ պատկերները բարեհաճեր է նուիրել Ս. Աթոռոյս, որ ամսոյս սկիզբները ընդունեց ձեռամբ Վեհազոյն տերութեան արժանաւոր Լրեսիսիանի Վեսեմ Կոմս Բաղոկայի Հիւպատոսի Աբ Քաղաքիս։

— Կ. Պոլսեցի Վսեմ. Զգաստեր մի Ս. Աթոռոյս Հառանդաւորաց դպրոցին նուիրեց 40 կոյս գաղղիերէն ընտիր գրքեր. կը փափաքի իւր անունը միայն յանիրատեսական տուժարին մէջ արձանագրել, գիտնալով որ ծածուկ նուիրածին փոխարէն անշուշտ կ'ընդունի յայտնապէս ըստ անուան բաներ Տեառն։

— Լրեւանցի Համբարձումը վաճառական Վեհ. մահտեսի Պողոս աղայն Յակոբեան խաչատրեանց, որ երկու տարի յառաջ յուխտ Ս. անօրինական տեղեայ եկած էր, ըստ յոյժ պանայ Սրբազան Հօր 25 բութ ծանրութեամբ (400 օկայ) զանգակ մի նուիրեց սրբոյ Աթոռոյս, որ ընդունեցինք սոյն ամսոյ մէջ։

— Կարնեցի Փոստաբաժնեան Վսեմ. Խաչատուր Էֆէնտիի հարապատ եղբայր Աշնուաշուք մահտեսի Յարգիս Էֆէնտին սրբոյ Աթոռոյս տարարանին օր ըստ օրէ բարեկարգուելը տեսնելով, ազգասիրաբար նուիրեց մէկ պատկեր տպելու փիլենքէր։

— Օսմանեան Խարէիսամ կառավարութիւնն՝ որ գիտէ իւր հաստատութիւնները ըստ արժանւոյն և անիրաւ վարձատրել, Խարէիսամ կառավարութիւնը մխիթարեց և Ս. Բաղաքիս սակաւաթիւ Հայ ժողովուրդը, եւ համայն միաբանութիւնս, շնորհելով ջերմագոյն կարգի մէճիտիէ պատուանշան իւր գործունէութեամբն ու աշխատասիրութեամբը ազգիս պարծանք եղող Աստուրիական Հիւպատոսարանի Բանիէլէ եւ Փոշոի տեսուչ Մեծ. Փասալ Յակոբ աղայի Յովհաննէսեան, ի վարձատրութիւն իւր հաւատարիմ ծառայութեանցը առ Օսմանեան կայսրութիւնն, որուն կը վերկայէն աչ միայն բնակիչք քաղաքիս, այլ և կուսակալք՝ որք ժամանակ ժամանակ վարած են Ս. Սանդիսոյ կառավարութիւնը։

Չեմք ուզեր աւելի դոփէտներ տալով վիրաւորել նորին Զգաստիրութեան պարկեշտութիւնը. գիտեն ամենն անոնք՝ որ Ս. Բաղաքիս այցելութիւն ըրած են. գիտեն կ'ըսեմք նորա ազնիւ բնաւորութիւնը, վեհանձն առատաձեռն ազգասէր ոգին, և արդարասէր ընթացքը։ Միայն շնորհաւորելով իր ստորձանը, կը խնդրեմք Տիրոջմէն օր քան զօր բարձրագոյն պատուոյ և ստորձանի արժանացնել, ի փառս Ազգիս և ի մխիթարութիւն Սիոնաբնակացս։

— Ինչպէս ծանուցած եմք Յոպպէէն մինչ Լրուսաղէմ ճանապարհի շինութիւնը, այս օրերս լուր կը պարտի թէ Ռեթզեհեմի եղած ճանապարհն ալ

շինուելու է մինչ 'ի Հայր Աբրահամ։ Յուսով եմք Պսեմ. Կառավարչին անդուլ աշխատութեանց արդեամբը այս դիւրութիւնն ալ վայելելու բարեբախտութիւն ունենամք։

— Հանդիսիս Պեծ. Խաժանորդք կը յիշեն Մարգուանցի Յարութիւն վարդապետի գժբաղդ արկածը, որ մինչ ցարդ 'ի վանս Ռէմլէու կը կենար իւր վայ դրուած պարարքը կատարելով։

Այս անգամ միաբանութիւնս յատուկ խնդրագրով միջնորդեց առ Սմեն Արքաբան Հայրն բաւ հատարել նորա վիշտը՝ և հայրապետական իշխանութիւնը ներել նմա, և ընդունել դարձեալ 'ի շարս հոգեւորականութեան։ Խաբեբեանամ Արքաբան Հայրը 'ի շնորհս խնդրանաց Ռէմլէու բերել տալով Ռէմլէէն, ու պատպանիչ և իրատներ խոստելով ընդունեց հայրական սիրով 'ի դաստ միաբանից։

— Յառաջուց անտի կառավարութեան անհոգութեան պատճառաւ քաղաքիս և շրջակայից ցորեանը հեռու երկիրներ կըտանէին, որով գինը օր ըստ օրէ կը բարձրանայր և բնակիչք բաւական նեղութիւն կը կրէին։ Պսեմ. Նազիֆ Փաշան՝ որուն արդարաւէր գործոց արդիւնքը ամէն տեղ ուսեալ ունեցած եմք Հանդիսիս միջոցաւորութեամբ հրատարակել այս անպատեհ անկարգութեան առաջքն առնելու նպատակաւ, սաստիկ հրաման հանեց այսուհետեւ ցորեան դուրս չի հանել. հետեւաբար առատանալով օր քան զօր գինը կըջափաւորուի, և այժմ շուկան բաւական ցորեան կը գտնուի։

— Աւստրիոյ Պեծ. Հիւպատոս Կոմս Ռապոկա օգափոխուեր հատարէրուաց զէմ մի ժամ հեռու որ Լոլլա անուանեալ տեղը տուն մի վարձած ըլլալով շաբթուս մէջ գիշերը ժամ երեք քառնի հատ Աբրաբայիք տունը մտնելով ինչ որ կը գտանեն ներքին յարկը կոզողտելով կը տանին։

Կոմս Ռապոկա թէ և ինքը արթուն և կրգայ վարի շշնկոցը, բայց սպասաւորները կարծելով անհոգ կըկենայ. իսկ սպասաւորք ախոռը կը գտնուին։

Ադաւտեան խմբագրելով անմիջապէս կառավարութեան ըսի կը տրուի։ Պսեմ. Նազիֆ Փաշայի արդիւնն հսկողութեամբ քիչ օրէն ամբողջ գտնուեցան ինչքերը և տաղակները շրջայակայ բանտարիուեցան։

— Ինչպէս անցեալ թուով ծանուցած եմք Կարնոյ Դեր. Ադաւորդ Յարութի Աղբ Եպիսկոպոսի վիհապետեան տեղեաց յուխտ և երկրպագութիւն գալը։ Նորին սրբազնութիւնը իւր ջերմ փափագը լրացնելով տմոյա վերջերը ճանապարհորդեց 'ի Կ. Պոլիս և անտի իւրսեփական վիճակը որոյ վերադարձին անհամբեր ոգւով կրսպասեն Նորին Սրբազնութեան աջորդ խնամոցը յանձնուած բարեպաշտ ժողովրդք։ Նորին Սրբազնութեան Ս. Քաղաքս անցուցած տուղ միջոցին ըստ արժանւոյն հիւրասիրութիւն եղաւ Սմեն. Սրբազան Հայր կոչմանէ և միաբանական ուխտէս։ Խորին ճանապարհ մաղթելով Նորին Սրբազնութեան կը խնդրեմք անմոռաց ունիլ իւր սրտին մէջ սրբազան վայրոց սէրը։ Նորին Սրբազնութեան հետ առաջեկցաւ և Աբժ. Աղէքսան վարդապետն Ալենճեան՝ որ ուրբ Օ. ատիէ 'ի վեր ատա կը գտնուէր։

ԸՕԴԵՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Դպրոցի հիմնական կանոններէն մէկն է ամեն ջանք ի գործ դնել եւ աշակերտ մը փոխանակ արձակելու՝ յուղղութիւն տալ։ Այս կանոնէն